



EU4Climate
Better Climate Policies for Eastern Partner Countries

SGP The GEF
Small Grants
Programme



**ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**



Մույն փաստաթուղթը կազմվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացված «Ազդակիր համայնքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որպես Հայաստանի էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականության մեջ սոցիալ-էկոլոգիական մշակույթի ներդրման մասնակիցներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի և ՄԱԶԾ/ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	5
1. ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
2. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐԻԶՑԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԳՐՈՎ ՀՀ ՍՏԱՆԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ	8
3. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐ	9
4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	15
5. ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ	17
6. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	199
7. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	20
8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ.....	23
9. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՅՏԵՐԸ	255
10. ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ	266
11. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	277
12. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱԼԻՆԻ ՏԻՄ-ԻՆ	28
Հավելված 1	30
Հավելված 2	31
Հավելված 3	353
Հավելված 4	35

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունն ուշադրության կենտրոնում է պահում կլիմայական, վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության և էներգախնայողության քաղաքականությունների իրականացումը: Այդ քաղաքականությունների մշակման և արդյունավետ իրականացման հարցում կարևոր է համայնքների ներգրավումը: Սակայն ինստիտուցիոնալ առումով համայնքները լիարժեք չեն մասնակցում այդ քաղաքականությունների կյանքի կոչման ծրագրերին: ՀՀ վերականգնվող էներգետիկայի քաղաքականության իրականացման արդյունքում Թալին համայնքը դարձել է Հայաստանի արևային էներգետիկայի զարգացման կենտրոն՝ նպաստելով երկրի ստանձնած կլիմայական պարտավորությունների կատարմանը, վերականգնվող էներգետիկայի զարգացմանը և ջերմոցային գազերի կրճատմանը: Սակայն Թալին համայնքը լիարժեք մասնակցություն չունի կլիմայական և էներգետիկայի ոլորտներում որոշումների կայացման գործընթացներում, ինչի հետևանքով լիարժեք չեն պաշտպանվում համայնքի շահերը:

«ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և միջոցառումները» հաշվետվության նպատակն է.

- նպաստել Թալին համայնքի լիարժեք ներգրավմանը և իր շահերի պաշտպանությանը կլիմայական և էներգետիկայի ոլորտների պետական քաղաքականությունների վերաբերյալ որոշումների և համայնքին վերաբերող որոշումների ընդունման գործընթացում:
- Աջակցել համայնքի սոցիալական, էկոլոգիական և տնտեսական զարգացմանը՝ հասնելու կլիմայական արդարության և էներգետիկ աղքատության կրճատմանը:
- Մշակել առաջարկություններ համայնքի՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության, կանաչ էներգետիկայի և կանաչ աշխատատեղերի ստեղծման, համայնքի կայուն զարգացման համար:

«ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և միջոցառումները» հաշվետվության կառուցվածքը

1. Թալին համայնքի ընդհանուր նկարագիր բաժնում ներկայացված է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի նկարագիրը, աշխարհագրական դիրքի, կլիմայի, բնակչության զբաղվածության մասին հակիրճ տեղեկատվություն:
2. Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման և Փարիզյան համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները Թալին համայնքում բաժնում ներկայացված են Թալին համայնքում իրականացվող քայլերը, ԱՍԳ-ով ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները:
3. Էլեկտրաէներգիայի տեղական արտադրություն և հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ բաժնում ներկայացված է տեղեկատվություն Թալին համայնքում սպառվող/օգտագործվող էներգետիկ ռեսուրսների, համայնքում

իրականացվող էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրերի, «Այգ 1» արևային ֆոտովոլտային կայանի օրինակով արևային էներգետիկայի զարգացման միտումների, ինչպես նաև նոր առաջացած խնդիրների, ռիսկերի և առաջարկվող լուծումների մասին:

4. **Արդյունաբերություն** բաժնում ներկայացված են համայնքում գործող ընդերքօգտագործմամբ զբաղվող ընկերությունների տվյալները սոցիալ-էկոլոգիական ազդեցությունը և պարտավորությունները, իրավակարգավորումների բացերը և առաջարկվող լուծումները:
5. **Կոմունալ ծառայություններ և թափոններ** բաժնում ներկայացված են կոշտ կենցաղային թափոնների և արևային էներգետիկայից առաջացող նոր՝ էլեկտրոնային թափոնների խնդիրը, աղբահանության վիճակը, իրավակարգավորման բացերը և առաջարկվող լուծումները:
6. **Անտառային տնտեսություն** բաժնում ներկայացված են համայնքի անտառային հողերի, անտառատնկումների համար նախատեսվող քայլերի վերաբերյալ տվյալներ:
7. **Հողային ռեսուրսներ** բաժնում ներկայացված են համայնքում հողի դեգրադացման, գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի փոփոխության մասին տվյալներ, կայուն հողօգտագործման իրավակարգավորման բացերը և առաջարկվող լուծումները:
8. **Համայնքային բյուջեի մասին** բաժնում ներկայացված է Թալին համայնքի 2023թ. բյուջեի նկարագիրը:
9. **Համայնքի սուբվենցիոն ծրագրերը և հայտերը** բաժնում ներկայացված են 2021-2023թթ. սուբվենցիոն ծրագրերը, դրանց կլիմայական և էներգետիկ ուղղվածությունը, պահանջվող համայնքային և պետական համաֆինանսավորման չափերի մասին տվյալներ:
10. **Թալին համայնքի 2023-2027թթ. զարգացման ծրագիր** բաժնում վերլուծված են Թալին համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ծրագրերը և դրանց իրականացման հնարավորությունները:
11. **Եզրակացություն** բաժնում ներկայացված են Թալին համայնքում կլիմայական և կանաչ էներգետիկայի քաղաքականության տեղայնացման խնդիրները:
12. **Առաջարկություններ, Թալինի ՏԻՄ-ին** բաժնում ներկայացված առաջարկություններ՝ ուղղված Թալինի ՏԻՄ-ին:
13. **Հավելվածներ:**
 - Հավելված 1.* Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ
 - Հավելված 2.* 2022թ. հունվարի 1-ի դրությամբ արևային էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ Թալին համայնքում արևային էլեկտրաէներգիա արտադրող կայանների հիմնական ցուցանիշները
 - Հավելված 3.* 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն արևային էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ համայնքում կառուցվող կայանների ցուցանիշներն ըստ կարգավորվող ընկերություններ


Հավելված 4. Թալին համայնքի տարածքում ոչ մետաղական հանքերի հիմնական ցուցանիշներ

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության կազմման տեղեկատվական հենք են ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, Թալին խոշորացված համայնքի պաշտոնական կայքերը, Էներգետիկայի և կլիմայի փոփոխության ոլորտների վերաբերյալ ազգային և միջազգային համապատասխան իրավական ակտերը, փաստաթղթերը: Համայնքի մասնակցությունն ապահովելու, կարծիքների և առաջարկությունների ձևավորման նպատակով օգտագործվել են հաղորդակցության տարբեր միջոցներ՝ անմիջական շփումներ, հարցազրույցներ, քննարկումներ, ինչպես նաև հարցումներ ոլորտային մասնագետների, ֆոկլուս խմբերի և ՏԻՄ-ի հետ: Համայնքում անցկացված քննարկումներին մասնակցել է 43 մարդ, հարցազրույց անցկացվել է 7 անձի հետ, հարցումներին մասնակցել է 15 անձ:

1. ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Թալին համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում՝ Արագած լեռան հարավ-արևմտյան փեշերին: Թալին խոշորացված համայնքում ընդգրկված է Թալին քաղաքը և 33 գյուղ՝ Ագարակավան, Ակունք, Աշնակ, Արագածավան, Արտենի, Գառնահովիտ, Գետափ, Դաշտադեմ, Դավթաշեն, Դիան, Եղնիկ, Զարինջա, Զովասար, Թաթուլ, Իրինդ, Լուսակն, Ծաղկասար, Կաթնաղբյուր, Կարմրաշեն, Կաքավաձոր, Հացաշեն, Զորագյուղ, Մաստարա, Ներքին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Նոր Արթիկ, Շղարշիկ, Ոսկեթաս, Պարտիզակ, Սուսեր, Վերին Բազմաբերդ, Վերին Սասնաշեն, Ցամաքասար:



Նկար 1. Թալին համայնքի ընդհանուր տեղադիրքը

Թալին համայնքի բնակչությունը 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ 37626 մարդ է, որից 14745–ը՝ տղամարդ, 14745 –ը՝ կին, 7969՝ երեխաներ:

Թալին համայնքի տարածքը 223 հազար հա է:

Համայնքի ոռոգելի տարածքի 90%-ը չի ոռոգվում ոռոգման ցանց չլինելու պատճառով:

Արտավայրերը գերաբաժեցված են:

Համայնքի տարածքում մատուցվող հիմնական ծառայություններն են ջրամատակարարումը, ջրահեռացումը, էներգամատակարարումը, գազամատակարարումը, կապի և փոստային ծառայություններ, փոքր և միջին բիզնես, համայնքային ծառայություն:

Շահագործվում է 25 ոչ մետաղական հանք:


Թալին համայնքում առկա է ինքնավար արևային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառման միտում: Վերջին տարիներին համայնքում շահագործվում է 6 արևային արդյունաբերական ֆոտովոլտային կայան, կառուցման փուլում է 7-ը՝ այդ թվում Հայաստանում ամենամեծ՝ 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» կայանը:

Բնակչության զբաղվածությունը

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հացահատիկն է (ցորեն և գարի), կաթը և միսը: Համայնքում գործում են կաթնամթերքի ձեռնարկություն և հակակարկտային կայանների արտադրամաս: Բնակչության մի մասը ներգրավված է ոչ մետաղական հանքեր շահագործող ընկերությունների, արևային կայանների կառուցման և շահագործման աշխատանքներում և համայնքային ծառայությունների ոլորտում:

Թալինում աշխատատեղերի պակաս կա:

«ԷկոԼուր»-ի հարցման արդյունքների համաձայն՝ համայնքի հետագա զարգացման առաջնահերթությունը տրվում է տուրիզմին և արևային տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանը, այնուհետև ինելաջի գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը:



Նկար 2. Հարցվածների առաջարկները Թալին համայնքի զարգացման վերաբերյալ

Թալինի կլիման

Համայնքին բնորոշ են ավելի մեծ հաճախականությամբ կրկնվող հիդրոոդերևութաբանական հետևյալ վտանգավոր երևույթները՝ երաշտներ, կարկտահարություն, հեղեղներ:

2023-2024թթ. ձմեռային սեզոնին դիտված նվազագույն ջերմաստիճանների առավելագույն արժեքները (TNx)-ը Հայաստանում նորմայից բարձր է եղել միջինում 3.4°C-ով, իսկ Թալինում դիտված առավել զգալի շեղումը նորմայից եղել է 4.9°C-ով: Վտանգավոր օդերևութաբանական երևույթներից 2024թ. մարտին Թալինում դիտվել է ուժեղ մառախուղ ≤ 50 մ տեսանելիությամբ: Եթե օդի նվազագույն ջերմաստիճանների ավելագույն արժեքները (TNx) 2023թ. ամռան սեզոնին Հայաստանում եղել են նորմայից բարձր՝ միջինում 0.7 °C-ով, ապա Թալինում այն կազմել է՝ 2.8 °C:

2022թ. ամռան սեզոնին Հայաստանի Հանրապետությունում ջերմաստիճանը նորմայից (1961-1990թթ.) բարձր է եղել միջինում 18 օր, իսկ Թալինում այդ շեղումը տևել է 55 օր, 2022թ. աշնանը՝ 16 օր¹: Թալին համայնքում 2021թ. ապրիլի երրորդ տասնօրյակին գրանցվել է ուժեղ երաշտ: Ամենաբարձր դասի շատ ուժեղ երաշտ գրանցվել է նույն տարվա հունիսի առաջին տասնօրյակից մինչև սեպտեմբերի վերջ²: Ամառային օրերի (Su25 ինդեքս՝ օրերի թիվը, երբ առավելագույն ջերմաստիճանը 25°C-ից բարձր է) գումարային թիվը 2022 թ. նորմայից (1961-1990թթ) ավելի է եղել միջինում 29 օրով, առավելագույն շեղումը եղել է Թալինում՝ 71 օրով: Սառնամանիքային օրերի թիվը զգալիորեն ցածր է եղել նորմայից 30 օրով: Տեղումների քանակը Հայաստանի նորմայից պակաս է եղել շուրջ 60%-ով:

¹<http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/eramsjak/III%20EramsJak%202022%20.pdf>

²<http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Tarekan%202021.pdf>

Երկրորդական արտաձին երևույթներից Թալինին բնորոշ են հողերի դեգրադացումը և էրոզիան: Միկրոկլիմայական իրավիճակի վրա զգալի ազդեցություն է թողնում անտառածածկ տարածքի բացակայությունը:

Ըստ հարցումների արդյունքների՝ Թալինում վերջին տարիներին հաճախակի են օդերևութաբանական անբարենպաստ երևույթները՝ երաշտ, կարկտահարություն, վաղ ցրտահարություն: Հողերը դեգրադացված են: Ընդհանուր պակասել են արոտավայրերի մակերեսները և խոտհարքերի կերային բազան: Արոտավայրերում բացակայում են խմոցներ: Նվազել է ծիրանի, մշակովի հատապտուղների, հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, կրճատվել է ընտանի խոշոր և մանր եղջերավոր անասունների թիվը և կաթնատվությունը: Համայնքի բարձրադիր գոտիներում սկսել են աճել այնպիսի մրգատեսակներ, որոնք նախկինում չեն աճել: Ժամանակակից խնայողական նոր տեխնոլոգիական համակարգերի ներդրման համար բնակչությունն անվճարունակ է:

Համայնքը կարիք ունի ջրամբարի կառուցման՝ լուծելու խմելու ջրի խնդիրը:

Ըստ տեղի բուժաշխատողների՝ բնակչության շրջանում վերջին տարիներին շատացել են սրտանոթային, ալերգիկ հիվանդությունները, հիպերտոնիաները, հոգեբանական ծանր սթրեսները:

Բնակիչներն անհրաժեշտ են համարում իրականացնել կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումներ:

ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 13-ի N 749-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 1.10 կետի համաձայն՝ մինչև 2025թ. 4-րդ եռամսյակը պետք է մշակվի Արագածոտնի մարզի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը /կատարման ժամկետը դեռևս չի լրացել/:

2. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐԻԶՑԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԳՐՈՎ ՀՀ ՍՏԱՆԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՑԱԼՆԵՐԸ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Թալին համայնքի ավագանին 2023 թ. ապրիլի 28-ի N52-Ա որոշմամբ տվել է համաձայնություն միանալու Եվրոպական միության կողմից իրականացվող «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը³: Որոշման համաձայն՝ երկու տարվա ընթացքում Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» տարածաշրջանային ծրագրի և այլ գործընկերների աջակցությամբ Դաշնագրի շրջանակներում պետք է մշակվի Թալին համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագիրը (ԿԷԿԳԾ) (Sustainable Energy and Climate Action Plan / SECAP):

³ <https://talin.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=b5011ab3-6c20-4609-9fca-1fda7bca33bc>

ԿԷԿԳԾ-ը նպատակ ունի սահմանել կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներ՝ նվազեցնելու CO₂-ի արտանետումներն առնվազն 40%-ով: Այն հնարավորություն է տալիս գնահատել համայնքների պատրաստվածությունը՝ իրականացնելու սոցիալ-էկոլոգիական, էներգետիկ, կլիմայական միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը՝ հաշվի առնելով համայնքների առանձնահատկությունները, հնարավորությունները և բարելավելով տնտեսական, սոցիալական և բնապահպանական իրավիճակը:

Այսպիսով, Թալին համայնքը ձեռք կբերի ԿԷԿԳԾ նոր գործիք, որի օգտագործումը կհեշտացնի համայնքի ներգրավումը կլիմայի և էներգետիկայի միջազգային ներդրումային ծրագրերին, որոնք անհրաժեշտ են սուղ բյուջեներ ունեցող և պետական սուբսիդիաներին ապավինող համայնքներին: Այն կապահովի համայնքի կայուն, կանաչ զարգացումը և կնպաստի Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ՀՀ ստանձնած ԱՄԳ⁴ պարտավորությունների կատարմանը:

Ըստ «ԷկոԼուր»-ի հարցումների վերլուծության՝ համայնքում էներգախնայողության և Փարիզյան համաձայնագրի շրջանակներում իրականացվող կլիմայի փոփոխության դիմակայությանն ուղղված ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը շատ ցածր է՝ հարցվածների 76%-ն այդ մասին տեղյակ չէ:


3. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Թալին համայնքում էներգետիկ կարիքների համար օգտագործվում է բնական գազ, էլեկտրաէներգիա, վառելափայտ և աթար: Համայնքի ոչ բոլոր բնակավայրերն են գազաֆիկացված: Ջեռուցման համար էլեկտրաէներգիայի օգտագործումը շատերի համար մատչելի չէ: Հաշվի առնելով արոտավայրերի կրճատումը, անասնապահության անկումը՝ նվազում է կենսավառելիքի օգտագործումը և կարիք կա այն փոխարինել հասանելի էլեկտրաէներգիայով, ինչպես նաև կիրառել էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնոլոգիաներ:

«ԷկոԼուր» հարցումների վերլուծության համաձայն՝ տնային տնտեսություններում օգտագործվող էներգակիրների դիմաց կատարվող տարեկան միջին ծախսերը կազմում են. վառելափայտ՝ ամռանը՝ 10 000, ձմռանը՝ 150 000 -200 000 դրամ, բնական գազ՝ ամռանը՝ 6 000, ձմռանը՝ 30-60 000 դրամ, էլեկտրաէներգիա՝ ամռանը 4 000, ձմռանը՝ 7 000-9 000 դրամ: Այդ ծախսերի կրճատման համար բնակիչներն առաջարկել են կատարել տան ջերմամեկուսացում, օգտագործել էներգախնայող լամպեր և տեխնիկա, տեղադրել ինքնավար արևային կայաններ և ջրատաքացուցիչներ:

⁴ <https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/>

Էլեկտրաէներգիայի ծախսերի կրճատմանն ուղղված առաջարկների բաշխումը



Նկար 3. Էլեկտրաէներգիայի ծախսերի կրճատմանն ուղղված հարցվածների առաջարկների բաշխումը

Համայնքում իրականացվում են էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրեր: Թալինի համայնքապետարանի շենքի տանիքին տեղադրվել է 30 կՎտ, Մշակույթի տան տանիքին՝ 20 կՎտ, Գեղարվեստի տան տանիքին՝ 15 կՎտ, մարզադպրոցի տանիքին՝ 10 կՎտ, բնակելի շենքերից մեկի տանիքին 10 կՎտ հզորությամբ արևային ինքնավար կայաններ:



Նկար 4. Արևային ինքնավար կայան Թալինի համայնքապետարանի շենքի տանիքին

2021թ. նախատեսվել են «Վերին Բազմաբերդ համայնքի մշակույթի տան տանիքին 12.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանի կառուցման աշխատանքներ», «Մաստարա համայնքի 6-րդ փողոցի 2-րդ փակուղու, 5-րդ փողոցի 3-րդ նրբանցքի, 14-րդ փողոցի 1-ին նրբանցքի, 12-րդ փողոցի, 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի լուսավորության ցանցի աշխատանքներ», «Կաթնաղբյուր համայնքի փողոցների

արտաքին լուսավորության ցանցի կառուցում», «Դաշտադեն գյուղի նոր լուսավորության ցանցի կառուցում» ծրագրերը:

2023թ. սուրվենցիոն ծրագրով նախատեսված է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին քաղաքի թիվ 2 մանկապարտեզի շենքի վերանորոգում:

Թալինը՝ արևային համայնք

Թալին համայնքը Հայաստանի արևային էներգետիկայի զարգացման կենտրոններից է: Արևային էներգետիկայի զարգացման համատեքստում համայնքը փոխում է իր զարգացման առաջնահերթությունները՝ մասնակից դառնալով ջերմոցային գազերի կրճատման գլոբալ գործընթացներին: Համայնքում արդեն իսկ էլեկտրաէներգիա է արտադրում 166574,0 Կվտ ընդհանուր հզորությամբ 10 արդյունաբերական արևային ֆոտովոլտային կայան (Հավելված 2): Կառուցման փուլում է գտնվում 215230 Կվտ ընդհանուր հզորությամբ 5 արևային կայան (Հավելված 3), այդ թվում՝ Հայաստանի ամենամեծ՝ «Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանը:



Նկար 5. Արևային ֆոտովոլտային կայան Թալինում

Համայնքում, արևային էներգետիկայի զարգացմամբ պայմանավորված, առաջացել են նոր խնդիրներ՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կրճատում, հողօգտագործման նվազումից բնակչության և համայնքային բյուջեի եկամտային մասի կրճատում, էլեկտրոնային թափոնների կառավարման անորոշություն:

Արևային կայանների կառուցման համար հատկացվել է շուրջ 660 հա հողատարածք, դրա համար փոխվել են հիմնականում համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և գործառնական նշանակությունը:

«ԷկոԼուր»-ի անցկացրած հարցումների համաձայն՝ համայնքում շահագործվող արևային էլեկտրակայաններից ստացվող ֆինանսական օժանդակությունները պետք է ուղղվեն համայնքում արդի պահանջներին համապատասխանող ջրախնայողական

համակարգերի ներդրմանը, օրգանական գյուղատնտեսական ենթակառուցվածքների հիմնմանը և զարգացմանը:

«Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի մասին

Հայաստանում 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» ամենամեծ արևային ֆոտովոլտային կայանը կառուցվելու է Թալին խոշորացված համայնքի Թալին և Դաշտադեմ բնակավայրերի վարչական տարածքներում: Կտեղադրվի 450.000 ֆոտովոլտային վահանակ: «Այգ-1» կայանի կառուցումը նախատեսվում է ավարտել 2025թ.: Կայանը կգործի 25 տարի: Կայանի միացումն ընդհանուր ցանցերին կիրականացվի 220 կՎ Աշնակ-1 և Աշնակ-2 օղային գծերով: Օղային գծի երկարությունը կկազմի մոտ 150մ:

ՀՀ կառավարությունը դեռ 2019թ. դեկտեմբերի 26-ի 1922-Լ որոշմամբ⁵ դիտարկել է ծրագրի իրականացման համար վերցնել հողատարածք նվիրաբերության տարբերակով:

Էլեկտրակայանը կզբաղեցնի 547.31 հա հողատարածք, որից 377.4495 հա-ն Դաշտադեմ բնակավայրից, 169.8614 հա-ն՝ Թալին բնակավայրից: Այդ հողամասերով համալրվել է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը, որն «Այգ-1» ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագիրն իրականացնող «Մասդար Արմենիա» ընկերությունում ունի 15% բաժնեմասնակցություն: Բաժնետոմսերի 85%-ը պատկանում է «Մասդար» ընկերությանը: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը 200 միլիոն ԱՄՆ դոլար է:

Դաշտադեմ բնակավայրից վերցված 377.4495 հեկտար հողատարածքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային արժեքը 822 միլիոն դրամ է՝ ըստ ՀՀ կառավարության 2021թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1777-Ն որոշման⁶, իսկ Թալին բնակավայրից վերցված 169.8614 հա հողամասերի արժեքը 2 միլիարդ 74 միլիոն 8 հազար դրամ է՝ համաձայն ՀՀ կառավարության 2023թ. հուլիսի 6-ի 1137-Ն որոշման⁷: «Այգ-1» ծրագրի շրջանակներում «Մասդար» ընկերությունը Դաշտադեմ և Թալին համայնքների հետ կնքած նվիրաբերության պայմանագրով իրականացրել է 320 միլիոն դրամի չափով համայնքային զարգացման վճարում: Այս գումարից 300 միլիոն դրամն ուղղվել է Դաշտադեմին ոռոգման ջրագծի կառուցման համար:

Թալին համայնքում ակնկալվում է շուրջ 2 միլիարդ դրամի սուբվենցիոն ծրագրերի իրագործում «Այգ-1» արևային կայանի կառուցման ծրագրին նվիրաբերված հողերի դիմաց: Ըստ Թալինի ՏԻՄ-ի՝ նախատեսվում է Մաստարա, Ագարակավան, Կաքավաձոր և Աշնակ բնակավայրերում խմելաջրի ցանցի վերանորոգում, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն, Գառնահովիտ, Կարմրաշեն, Զովասար Ոսկեթաս բնակավայրերի գազաֆիկացում, Թալին քաղաքում կոյուղու անցկացում, Թալին քաղաքի մանկապարտեզի վերանորոգում:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Թալին քաղաքում կառուցվել է պուրակ, գերեզմանատուն:

Խնդիր

⁵ <https://www.e-gov.am/gov-decrees/item/33223/>

⁶ <https://www.e-gov.am/gov-decrees/item/37171/>

⁷ <https://e-gov.am/gov-decrees/item/40771/>

«Մասդար-Արմենիա» ՓԲԸ-ն չի դիմել ՀԾԿՀ-ին համապատասխան լիցենզիա ստանալու համար (ՀԾԿՀ-ի 31 . 01 . 2024 թվականի ՍՇ/34.1-Ս2-5/397-2024 պատասխան նամակը էկոլոգիայի հարցմանը):

Գնահատված չէ «Այգ-1» ծրագրի համար նվիրաբերված հողերի համայնքի կողմից երկարաժամկետ օգտագործման տնտեսական օգուտի և հնարավոր վնասի չափը:

Ծրագրում էլեկտրոնային թափոնների առաջացման և դրանց չեզոքացման պահանջ նախատեսված չէ, կայանի շահագործման արդյունքում առաջացող էլեկտրոնային թափոնների կառավարման հարցը բաց է:

Ըստ «Այգ-1» ծրագրի ՇՄԱԳ հաշվետվության՝ Ծրագիրն իր ավանդը կունենա կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման մասով Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, ինչպես նաև շրջակա միջավայրի և հասարակության վրա կլիմայի փոփոխությամբ պայմանավորված բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու գործում:

Խնդիր

Փաստաթղթում նշված են կլիմայի փոփոխության մեղմման համար արևային էներգետիկայի դերակատարման մասին ընդհանուր մոտեցումներ, և առկա չեն կայանի գործարկմամբ տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի և դրա արդյունքում կրճատվող ջերմոցային գազերի քանակությունների մասին տվյալներ:

«Այգ 1» ծրագրի ՇՄԱԳ-ի Բնապահպանական և սոցիալական ազդեցությունը մեղմող հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝⁸ նախատեսվում են միջոցառումներ՝ ուղղված հնարավոր ազդեցությունների մեղմմանը.

- թափոնների կառավարում
- անհանգստության պատճառում և ֆիզիկական ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա
- էրոզիայի երևույթներ
- հողի և ջրի աղտոտվածության հետ կապված գործունեություն
- լանդշաֆտի և տեսանելի պատկերների փոփոխություններ
- աղմուկ
- օդի որակի հետ կապված գործողություններ
- պատմական և մշակութային վայրերի հնարավոր ռիսկերը
- ռիսկերը հանրային և աշխատողների առողջության և անվտանգության համար
- սոցիալական ազդեցություն
- գենդերային խնդիրներ

Համայնքը կարիք ունի ապահովելու լիարժեք մասնակցություն արևային էներգետիկայի բիզնեսի կողմից հաստատված Բնապահպանական և սոցիալական

⁸ <http://env.am/storage/files/shmag-masdar-hajastan-1.pdf>

ազդեցությունը մեղմող հիմնական միջոցառումների պլանի իրականացման մշտադիտարկմանը:

ՀՀ կառավարության 2024թ. մայիսի 23-ի N 734-Ն որոշմամբ⁹ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին: Սույն որոշման արդյունքում «Այգ 1» արևային կայանի կառուցման ծրագրի առնչությամբ առաջացան հարցադրումներ ծրագրի իրականացման ժամկետների, համայնքի հետ նախնական պայմանավորվածությամբ ստանձնած սոցիալ-տնտեսական օժանդակության տրամադրման վերաբերյալ: «Էկոլուր»-ի հարցմանն ի պատասխան ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը 07.06.2024թ. N 04/15152-2024 հայտնել է. «1. Ներկայում որպես «Այգ 1» ծրագրի իրականացնող պետության կողմից հանդես է գալիս «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն, որի գործունեության դադարեցման մասին այս պահին դեռևս համապատասխան իրավական ակտ առկա չէ:

Հարկ է նաև նշել, որ Թալին և Դաշտադեմ բնակավայրերում իրականացված և նախատեսվող ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է «Այգ 1» ծրագրի շրջանակում և նույնիսկ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի գործունեության դադարեցումը խոչընդոտ չի հանդիսանա հետագայում նախատեսվող ծրագրերի ֆինանսավորման համար, քանի որ ֆինանսավորումը կատարվում է «Այգ 1» ծրագրի շրջանակում՝ անկախ նրանից, թե ով հանդես կգա պետության անունից:

2. Հայտնում ենք, որ 2024 թվականի հուլիսի 25-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1986-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին լիազորելու մասին» թիվ 1167-Ն որոշումը¹⁰:

Հարկ է նաև նշել, որ Էներգիայի (հզորության) արտադրության կամ Էներգետիկայի բնագավառում այլ էլեկտրական գործունեություն ծավալելու նպատակով՝ «Մասդար Արմենիա» ընկերությունը ծրագրի մեկնարկից առաջ օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստանալու հայտ կներկայացնի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

Ի պատասխան «Էկոլուր»-ի հարցման ՀՀ ՏԿԵՆ նախարարությունից 04.06.2024թ. N° ՆՍ//17839-2024 նամակով հայտնել են. «Նախագծով նախատեսվում է շինարարության մեկնարկի ամսաթվի և ֆինանսավորման ամփոփման վերջնաժամկետի երկարաձգում և 2023 թվականի դեկտեմբերի 25-ի փոխարեն սահմանվում է 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

⁹ <https://www.arlis.am/documentview.aspx/Res/DocumentView.aspx?docid=193123>
¹⁰ <https://www.e-gov.am/gov-decrees/item/43057/>

Բացի այդ, կայանի շահագործման հանձնելու ժամկետները պետք է համապատասխանեցվեն Հայաստան-Վրաստան կՎ Էլեկտրահաղորդման գծի կառուցման ժամկետներին, և դա կարող է լինել ոչ շուտ, քան 2026 թվականի երրորդ եռամսյակը»:

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (ANIF) 2024թ. ապրիլի 16-ի Ե/Ն-037 նամակում նշված է. «ANIF-ի և «Մասդար» ընկերության համատեղ «Այգ-1» ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագիրն ընթացքի մեջ է: Ներկա պահին որոշ լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտություն է առաջացել: Այդ աշխատանքների իրականացումը ներառում է այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են՝ երկրաբանական, հողային»:

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Թալին խոշորացված համայնքում շահագործվում է 25 ոչ մետաղական՝ հիմնականում տուֆի հանք (Հավելված 4), որոնց զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 160,581 հա: Ընդերքօգտագործման իրավունքները երկարաժամկետ են և ունեն երկարաձգման հնարավորություն:

Հանքերի ռեկուլտիվացիան ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է հանքերի շահագործման ավարտից հետո: Մինչ ռեկուլտիվացումը հողերը ենթարկվում են շարունակական դեգրադացման՝ նպաստելով ջերմոցային գազերի արտանետումների, անապատացման գործընթացների արագացման: Չնայած ՀՀ հողային, ընդերքի մասին օրենսգրքերով և ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված են հողերի պահպանության և աղտոտման կանխարգելմանն ու հանքերի ռեկուլտիվացմանն ուղղված դրույթներ, այնուամենայնիվ, գործնականում դրանք չեն կատարվում:

Ռեկուլտիվացման համար ստեղծված է ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ, որտեղ կուտակվում են ընդերքօգտագործողների կողմից հանքավայրերի ռեկուլտիվացման համար նախատեսված գումարներն ընդերքօգտագործողի կողմից ռեկուլտիվացիա չիրականացնելու պարագայում լիազոր մարմնի կողմից այդ աշխատանքների իրականացման համար:

Խնդիր

Առանց հողերի պահպանման և առանց միջոցառումների հանքավայրերի երկարատև շահագործումը և ռեկուլտիվացիայի չիրականացումը նպաստում է հողերի շարունակական դեգրադացմանը, ինչն իր հերթին առաջացնում է անապատացում, հողերում պահպանվող ածխածնի արտանետում:

Գործողություններ

Հանքերի ռեկուլտիվացման, ընդերքօգտագործողի ստանձնած բնապահպանական միջոցառումների կատարման պարտավորությունը դարձնել իմպերատիվ՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարելով համապատասխան փոփոխություններ և դրանց չկատարման համար սահմանել պատասխանատվության դրույթներ:

Թալին համայնքում ոչ մետաղական հանքեր շահագործող 25 ընկերություններից միայն 13 են ընդերքօգտագործման պայմանագրերով ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու պարտավորություններ ստանձնել տարեկան 4 755 հազար դրամ գումարի չափով: Ընկերությունների ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորությունների չափը տարբեր ընկերությունների պայմանագրերում տատանվում է 175 հազար դրամից մինչև 970 հազար դրամը:

Ըստ Թալինի ՏԻՄ-ի՝ ընդերքօգտագործող ընկերությունների հետ կնքվել են համաձայնագրեր, որոնց շրջանակներում ՏԻՄ-ը դիմում է ընկերություններին համաձայնագրով սահմանված գումարների շրջանակներում համայնքում որևէ աշխատանքի ֆինանսավորում ապահովելու համար:

Խնդիր

Համայնքապետարանն ընդերքօգտագործման պայմանագրի կողմ չէ և չունի իրավաբանորեն պարտադիր կամարտահայտման հնարավորություն:

Համայնքում շահագործվող հանքավայրերից մթնոլորտային օդ արտանետվող փոշու, ինչպես նաև տեխնիկական միջոցներից արտազատվող վտանգավոր նյութերի մոնիթորինգ չի իրականացվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Ընդերքօգտագործման պայմանագրերով նախատեսված սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու գումարները բավարար չեն սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման համար և չեն ներառվում համայնքի զարգացման ծրագրերում:

Գործողություն

«Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն, ազդակիր համայնքին դարձնել ընդերքօգտագործման պայմանագրի կողմ՝ համայնքին տալով հնարավորություն ներկայացնելու իր իրական կարիքները և պայմանագրի կետերի չկատարման դեպքում համայնքին ընձեռվի իրավաբանորեն պարտադիր կամարտահայտման հնարավորություն:

Մահմանել դրույթներ ընդերքօգտագործման պայմանագրերում ընդերքօգտագործողի կողմից սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում նվազագույն ներդրումային չափի մասին: Նախատեսել դրույթներ այդ գումարների կուտակման և դրանք հետագայում կլիմայական և կանաչ էներգետիկայի ծրագրերի իրականացման համար: Ապահովել համայնքային բյուջեի մուտքային և ծախսային մասում այդ գումարների արտացոլման մեխանիզմներ:

Համայնքի հանքավայրերի տարածքներում տեղադրել մթնոլորտային օդի արտանետումների մշտադիտարկման դիտակետեր:

5. ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

Թալին համայնքում լիարժեք լուծված չեն աղբահանության, ինչպես նաև աղբի կառավարման խնդիրները. չկան կառավարելի և օրինական աղբավայրեր:

Թալին համայնքն ունի 5 աղբավայր. Թալինում՝ 3 հա, Մաստարայում՝ 0,5 հա, Թաթուլում՝ 0,5 հա, Կաթնաղբյուրում՝ 0,5 հա, Արագածում՝ 1 հա, Արտենիում՝ 1 հա մակերեսով: Թալինում և Արագածում աղբահանությունն իրականացվում է ամեն օր՝ բացի շաբաթ և կիրակի օրերից, մյուս բնակավայրերում՝ շաբաթական 1 կամ 2 անգամ:

Ըստ Թալինի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի ղեկավարի՝ Թալին քաղաքի աղբավայրում օրական տեղադրվում է մոտ 2 տոննա աղբ, Արագածի աղբավայրում Թալինի աղբավայրի օրական ծավալի շուրջ 30%-ի չափով, մյուս բնակավայրերի աղբավայրերում՝ շաբաթական 30%-ի չափով: Ստացվում է, որ տարեկան Թալին քաղաքի աղբավայրում տեղադրվում է 538տ թափոն: Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ Թալին քաղաքի աղբավայրում տարեկան տեղադրվում է 110-120տ կենցաղային թափոն¹¹: «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալները մոտ 5 անգամ պակաս են Թալինի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի տրամադրած տվյալից:

Թալին քաղաքի աղբավայրը ցանկապատված չէ, չունի պահակակետ, մայրուղուց սկսվող աղբավայրի ճանապարհի երկայնքով աղբակույտեր են: Աղբավայրում նկատվում են ինքնայրման օջախներ:



Նկար 6. Թալինի քաղաքային աղբավայր

Հաշվի առնելով արևային էներգետիկայի զարգացումը՝ Թալինում 20-25 տարիների ընթացքում կկուտակվեն ավելի քան 600 000 հատ շահագործումից դուրս եկած արևային վահանակներ: Արևային կայանների կառուցման ծրագրերում չեն նախատեսվել հստակ տարածքներ այդ կայանների շահագործման արդյունքում գոյացող էլեկտրոնային թափոնների տեղադրման համար: ՀՀ-ում դրանց

¹¹ <http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Tarekan%202021.pdf>

օգտահանման, չեզոքացման, պահման և վնասագերծման համապատասխան նորմատիվ բազան դեռևս բացակայում է:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով Թալինի ՏԻՄ-ն աղբավայր շահագործելու լիազորություն չունի: Նույն օրենքով ՏԻՄ-ի համար սահմանված լիազորությունները բավարար չեն թափոնների կառավարումը լիարժեք կազմակերպելու և վերահսկելու համար: «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով թափոնների գործածության ոլորտում ՏԻՄ-երի իրավասություններն են.

- ա) հսկողություն աղբահանման նկատմամբ
- բ) տարածքների սանիտարական մաքրման սխեմաների կազմում
- գ) չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացում
- դ) ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցության կազմակերպում
- ե) համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանն աջակցություն:

Խնդիր

Թալինի քաղաքային աղբավայրում տեղադրվող աղբի ենթադրյալ քանակությունը մի քանի անգամ պակաս է իրականում առաջացող աղբի քանակից: Կենցաղային աղբի մի մասը չի կուտակվում աղբավայրերում և անկազմակերպ թափվում է բնակավայրերին կից տարածքներում, ձորակներում՝ ձևավորելով ինքնակամ աղբակույտեր, որոնց համար որևէ մարմին պատասխանատվություն չի կրում և դրանք չեն հաշվառվում ջերմոցային գազերի արտանետման տեսանկյունից:

ՀՀ-ում էլեկտրոնային թափոնների օգտահանման, չեզոքացման, պահման և վնասագերծման համապատասխան նորմատիվ բազան դեռևս բացակայում է:

Աղբահանության կազմակերպման համար ՏԻՄ-ը չունի բավարար ֆինանսական և տեխնիկական միջոցներ: Մասնավոր հատվածի կողմից չկա հետաքրքրվածություն բարձրորակ ծառայություններ մատուցելու համար:

ՏԻՄ-ը «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» և «Թափոնների մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով լիազորություն չունի շահագործելու աղբավայրերը:

Գործողություն

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարել՝ ընդլայնելով և ամբողջացնելով ՏԻՄ-ի լիազորություններն աղբահանության կազմակերպման և աղբավայրերի կառավարման գործում:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ հստակեցնելով ՏԻՄ-երի կողմից աղբավայրերի կառավարման գործընթացում մասնակցությունը և պատասխանատվությունը:

Իրականացնել ինքնակամ ձևավորված աղբակույտերի գույքագրում և հաշվառում, ապահովել թափոնների մասին ճշգրիտ տեղեկատվության հրապարակում պաշտոնական կայքում:

Գործող աղբավայրերը համապատասխանեցնել սանիտարական չափորոշիչներին:

Իրականացնել միջոցառումներ թափոնների տեսակավորման և վերամշակման ուղղությամբ:

Մշակել էլեկտրոնային թափոնների կառավարման, ՀՀ-ում դրանց օգտահանման, չեզոքացման, պահման և վնասագերծման նորմատիվ բազա:

6. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Թալին համայնքի անտառային ֆոնդի հողերը կազմում են 1082,09 հա, որը համայնքի ընդհանուր տարածքի շուրջ 1 տոկոսն է: Դրանք հիմնականում անտառածածկ չեն: Հաշվի առնելով համայնքի խիստ կլիմայական պայմանները և խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ՝ համայնքը կարիք ունի անտառածածկ տարածքների, բնակավայրային հողերում ընդհանուր օգտագործման կանաչ գոտիների, այգիների ընդլայնման:

Համայնքի բնակավայրեր տանող ճանապարհներին տնկվել է շուրջ 6000 ծառ:

Ըստ Թալինի ՏԻՄ-ի՝ անտառածածկի ավելացման ՀՀ միջազգային պարտավորության կատարման համար անտառային ոլորտը կառավարող լիազոր մարմնից Թալինի ՏԻՄ-ը հարցում է ստացել, թե համայնքն ինչպիսի տարածքներ ունի, որոնք նպատակահարմար կլինի անտառաշերտ ստեղծելու: Համայնքը տրամադրել է անտառային շերտ ստեղծելու համար համապատասխան տարածքների մասին տեղեկատվություն:

2021թ-ի ապրիլի 22-ի ՀՀ կառավարության «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» 610-Լ որոշման համաձայն՝ նախատեսվում է մինչև 2030թ. անտառածածկն ավելացնել Հայաստանի տարածքի 12.9% չափով՝ տնկելով 50 000 հա անտառ:

Համայնքի 2023-2027թթ. զարգացման ծրագրում նշված է «Քաղաքային զբոսայգու բարեկարգում» ծրագիրը՝ 60 միլիոն դրամ ընդհանուր բյուջեով և «Կանաչ գոտիների ստեղծում՝ մայրերի և ճանապարհների եզրերին ծառատունկներ կատարելով» ծրագիր՝ 15 միլիոն դրամ ընդհանուր բյուջեով:

«Այգ 1» արևային կայանի ՇՄԱԳ-ի համաձայն՝ նախատեսվում է կայանի շուրջը ստեղծել պահպանման կանաչ գոտի շինարարության փուլից հետո, ինչի արժեքը սահմանված է 30 000 դոլլար:


7. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Կլիմայի փոփոխության ռիսկերից է հողերի բերրիության անկումը, դեգրադացումը, անապատացումը:

Ըստ ՀՀ Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրության՝ առաջիկա 100 տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտում կանխատեսվում է.

- 10-30%-ով հողի խոնավության նվազում, 7-13%-ով գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի խոնավապահովվածության նվազում
- հողի ջրային դեֆիցիտի աճ 25-30%-ով
- ոռոգվող հողատարածքների արտադրողականության կրճատում մոտ 24%-ով
- հողերի և բնական արոտավայրերի դեգրադացում. արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրճատում մինչև 2030թ. 4-10%-ով
- բերքատվության նվազում մինչև 2030թ. 8-14%-ով:

Թափնում անցկացված հարցումների և հարցազրույցների համաձայն՝ համայնքում հողերի դեգրադացման հետևանքով բերքատվությունը նվազել է: Դեգրադացման պատճառներից նշել են հողերի ոչ գրագետ օգտագործումը: Անհրաժեշտ են համարել գյուղացիների շրջանում իրազեկման, կրթական միջոցառումների, հողի հարստացման ծրագրերի իրականացումը բերքատվության բարձրացման համար:



Նկար 7. Անապատացման ռիսկի գոտին Հայաստանում՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրի, 2015թ.

Ըստ Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարության՝ ամբողջ Արագածոտնի մարզը գտնվում է անապատացման ռիսկի գոտում:

Հողերի կայուն կառավարումն ամրագրված է ՀՀ կառավարության 2002թ. մարտի 28-ի N 13 «Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային

ծրագրի մասին» արձանագրային որոշմամբ,¹² «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» 2015թ. մայիսի 27-ի N 23 որոշմամբ,¹³ ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում հողերի դեգրադացիայի չեզոքացման ծրագիրը հաստատելու մասին» N 725-Լ որոշմամբ: Այս որոշման համաձայն՝ Հայաստանում հողերի դեգրադացիայի չեզոքացմանը հասնելու համար ազգային կամավոր գործալ նպատակ է սահմանվել մինչև 2040 թվականը հողում (ստորգետնյա և վերգետնյա հատվածներում) օրգանական ածխածնի պաշարներն ավելացնել 1.5 %-ով՝ 2015 թվականի վիճակի համեմատ¹⁴:

Այս նպատակին հասնելու համար նախատեսված հիմնական գործողությունների մեծ մասը Թալին համայնքում չի իրականացվել, մասնավորապես, չի դադարեցվել գյուղատնտեսական մշակովի հողերի դեգրադացիան, չի բարելավվել արոտավայրերի կառավարումը, չի գնահատվել դեգրադացված հողերի մասնաբաժինն ըստ դասերի, չի բացահայտվել հողային ռեսուրսների հիմքում ընկած ներուժի և ինքնավերականգնման աստիճանը, չեն իրականացվել ընդերքօգտագործման արդյունքում խախտված՝ լքված և տիրագուրկ հանքավայրերի տարածքներում հողերի նպատակային վերականգնման ծրագրեր:



Նկար 8. Անջրդի հող Թալինում

Հողերի դեգրադացիայի չեզոքացման ծրագրի իրականացման միջոցառումներից է «Գյուղատնտեսական նշանակության հողերն այլ կատեգորիայի փոխադրման բացառիկ դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը և վարչապետի աշխատակազմ ներկայացնելը մինչև 2021թ. երրորդ եռամսյակը: Նպատակն էր բարձրացնել հողօգտագործման արդյունավետությունը և բացառել գյուղատնտեսական շրջանառությունից հողերի անհիմն դուրսբերումը: ՀՀ կառավարությունը 2021թ. հունիսի 17-ին ընդունել է «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987 – Ն որոշումն¹⁵ առանց «բացառիկ» բառի: Ըստ էության, որոշումը թույլատրում է գյուղատնտեսական նշանակության հողերն այլ

¹² <https://www.irtek.am/views/act.aspx?aid=16855>

¹³ http://env.am/storage/files/2015-gac_1.pdf


¹⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152368>

¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153709>

նշանակության փոխադրել առանց բացառիկ դեպքերի սահմանման: Այս որոշման հիմնավորման համաձայն՝ 2011-2021թթ. ընթացքում շուրջ 80 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողեր փոխադրվել են ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի: Թալին համայնքը վերջին մի քանի տարիներին կորցրել է 820,581 հա գյուղատնտեսական նշանակության հող՝ փոխելով այդ հողերի կատեգորիան ընդերքօգտագործման և էներգետիկ նպատակներով օգտագործման համար:

Թալին համայնքի տարածքը 223 հազար հա է, վարչական տարածքը՝ 188 հազար 8 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմել են 82 հազար 167,1 հա՝ ըստ 2023-2027թթ. համայնքի զարգացման ծրագրի: Ըստ այդ ծրագրի՝ էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը կազմել են 487,58 հա: Ծրագրում հաշվի չի առնվել, որ Դաշտադեմից 377,4495 հա (ՀՀ կառավարության 2021թ. հունիսի 18-ի թիվ 1021-Ա որոշում¹⁶) և Թալինից 169,86 հա արոտավայր (2023թ. մարտի 2-ի Թալին համայնքի ավագանու 28 փետրվարի 2023 թվականի N 11-Ա որոշում¹⁷) նվիրաբերվել է «Այգ-1» արևային կայանի կառուցման համար: Ներկայում Թալին համայնքի ավելի քան 660 հա հողատարածք հատկացված է արևային կայաններին և դրանց ենթակառուցվածքներին:

Համայնքի վարչական տարածքում 25 ոչ մետաղական հանքավայրերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 160,581 հա¹⁸:



Նկար 9. Թալին համայնքի վարչական տարածքի հողերի մակերեսները՝ ըստ 2023-2027թթ. համայնքի զարգացման ծրագրի

¹⁶ <https://www.e-gov.am/gov-decrees/item/36430/>

¹⁷ <https://talin.am/Pages/DocFlow/default.aspx?nt=1&a=v&g=afec1150-6224-43f8-94db-79b16b38434c>

¹⁸ <https://talin.am/Pages/Home/default.aspx>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների՝ «բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման վերաբերյալ» մեթոդական ուղեցույցի¹⁹ համաձայն՝ համայնքները պետք է ունենան հողերի կառավարման ամենամյա ծրագիր, որի շրջանակներում պետք է մշակվի արոտավայրերի օգտագործման և պահպանման միջոցառումների պլան՝ գերարածեցումը և էրոզիայի պրոցեսները կանխելու նպատակով: Թալինի համայնքապետարանի պաշտոնական կայքում հողերի կառավարման ամենամյա ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Խնդիրներ

820,581 հա գյուղատնտեսական նշանակության հողի կատեգորիան փոփոխելիս՝ չի գնահատվել այդ հողերում ածխածնի պաշարի կորուստը, որը տեղափոխման և պահպանման ժամանակ արտանետվելու է: Պետք է նաև գնահատել ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի ներքո ՀՀ վերցրած պարտավորությունների շրջանակում ինչ փոխհատուցման միջոցառումներ պետք է իրականացվեն:

Գյուղատնտեսական նշանակության հողերի կորուստը հանգեցրել է ֆերմերային տնտեսությունների եկամուտների նվազմանը, աշխատատեղերի կորստին:

Հողերի դեգրադացիայի չեզոքացման ուղղված միջոցառումներ Թալինում չեն իրականացվել և նախատեսված չեն Թալինի զարգացման 2023-2027թթ. հնգամյա ծրագրում:

Գործողություններ

Հողային ռեսուրսների օգտագործման խնդիրներն ունեն իրավական կարգավորման կարիք: Իրավական կարգավորումը պետք է ապահովի ինչպես վերականգնվող էներգետիկայի զարգացման, այնպես էլ կլիմայի փոփոխության հարմարվողականության, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, հողի՝ որպես բնական ռեսուրսի, ռացիոնալ օգտագործման հավասարակշռությունը:

«Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987 – Ն որոշման մեջ կատարել փոփոխություն, սահմանել գյուղատնտեսական նշանակության հողերի փոփոխումը բացառող դեպքերը՝ կանխելու գյուղատնտեսական նշանակության հողերի կորուստը:


8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Թալին համայնքի 2023թ. եկամտային մասը կազմում է 2 306 միլիոն 137 հազար 600 դրամ, որից սեփական եկամուտները 650 միլիոն 55 հազար 470 դրամ: Սեփական եկամուտների նախատեսվող մուտքերը ներկայացված են նկար 10-ում:

¹⁹ https://api.mtd.am/storage/pages/files/2022/11/pdf/07_12-01-sc796-6368bb5f3eccc.pdf



Նկար 10. Թալին համայնքի սեփական եկամուտների նախատեսվող մուտքերը



Նկար 11. Թալին համայնքի 2023թ. ծախսային մասը

Համայնքն, ունենալով 650 միլիոն 55 հազար 47 դրամ սեփական եկամուտ, միայն 585 միլիոն 786 հազար 6 դրամը ծախսում է աշխատավարձերի և հավելավճարների համար: Համայնքը չունի բավարար սեփական եկամուտ համայնքի կարիքների, անհրաժեշտ ծառայությունների մատուցման համար լինելով բյուջետային մշտական դեֆիցիտի մեջ:

Գործողություն

Համայնքը պետք է մշակի ԿԷԿԳԾ, որում կներառվեն բյուջեի, պետական, միջազգային, ինչպես նաև մասնավոր ընկերությունների ֆինանսավորման ներգրավման խնդիրները:

Թալինի բյուջետային մուտքերն ավելացնելու նպատակով համայնքը հնարավորություն ունի իր վարչական տարածքում գործող բիզնեսի համար, 2010 թվականի ապրիլի 27-ին ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, սահմանել տեղական հարկատեսակ:

9. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՅՏԵՐԸ

2023թ. համար Թալին համայնքի ավագանին հավանություն է տվել 7 սուբվենցիոն ծրագրի, որոնց իրականացման համար անհրաժեշտ կլինի անցնել սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար պահանջվող ընթացակարգերը: Դրանք են՝

Հ/Հ	Ծրագրի նկարագրությունը	ԿՓ ուղղվածությունը
1.	Դաշտադեմ բնակավայրի ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքներ	Հարմարվողականություն
2.	Ծաղկասար, Մաստարա բնակավայրերում ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման աշխատանքներ	Հարմարվողականություն
3.	Եղնիկ, Կաքավաձոր, Ներքին Բազմաբերդ, բնակավայրերում փողոցների նորոգում սալարկմամբ աշխատանքները	Հարմարվողականություն
4.	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան, Արտենի, Լուսակն բնակավայրերում ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման աշխատանքներ	Հարմարվողականություն
5.	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ագարակավան, Կաքավաձոր բնակավայրերի խմելաջրի ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքներ	Հարմարվողականություն
6.	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին քաղաքի թիվ 2 մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներ	Մեղմում

Խնդիր
 Թալին համայնքի համար իրականացվող և նախատեսվող ծրագրերն առնչվում են ՀՀ կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, էներգախնայողության և էներգաարդյունավետության քաղաքականություններին, սակայն ուղղակիորեն չի գնահատվել կլիմայական ազդեցության բաղադրիչը:

Գործողություն

Տնային տնտեսությունների վրա կլիմայական և էներգետիկ սուբվենցիոն ծրագրերի դրական ազդեցությունը հնարավոր է ապահովել կլիմայական արդարության և էներգետիկ աղքատության հաղթահարման մեխանիզմների ներդրման շնորհիվ՝ օգտագործելով եվրոպական մոտեցումները, կլիմայի և կայուն էներգետիկայի սոցիալական, էկոլոգիական միջոցառումների պլանը:

10. ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Թալին համայնքի 2023-2027թթ. զարգացման 35 ծրագրերից 12-ի իրականացումը առնչվում է կլիմայի փոփոխության հարմարվողականությանը և մեղմմանը²⁰: Այդ ծրագրերն են.

Հ/Հ	Ծրագրի նկարագրությունը	Բյուջե, հազար ՀՀԴ	ԿՓ ուղղվածությունը
1.	Խմելու ջրի ցանցի վերանորոգում	25 000	Հարմարվողականություն
2.	Խմելու ջրի մաքրման կայաններ	70 000	Հարմարվողականություն
3.	Մշակույթի կենտրոնի վերանորոգում	80 000	Մեղմում
4.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգում և գույքով ապահովում	100 000	Մեղմում
5.	Սելավատարերի մաքրում	20 000	Հարմարվողականություն
6.	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում և սպասարկում	50 000	Մեղմում
7.	Քաղաքային զբոսայգու բարեկարգում	60 000	Հարմարվողականություն
8.	Համայնքի աղբավայրերի կառուցում	50 000	Մեղմում
9.	Կանաչ գոտիների ստեղծում՝ մայթերի և ճանապարհների եզրերին ծառատունկեր կատարելով	15 000	Հարմարվողականություն
10.	Բազմաբնակարան շենքերի վերանորոգում/տանիք/մուտք	210 000	Մեղմում
11.	Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	240 000	Մեղմում
12.	Բժշական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	14 000	Հարմարվողականություն
	ԸՆԴԱՄԵՆԸ	3 459 000	

Իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Թալինի ներկայիս սուբվենցիոն և զարգացման ծրագրերի որոշակի մասը թեև ունի կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության ուղղվածություն,

²⁰ <https://talin.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&dt=Projects>

սակայն դրանք չեն դիտարկվել, գնահատվել և պլանավորվել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման տեսանկյունից: ԱՍԳ պարտավորությունների կատարման տեսանկյունից Թալինում զարգանում է արևային էներգետիկան:

11. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի կայուն զարգացմանը, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման հիմնական նպատակներին, ցածրածխածնային էներգետիկ անցման, էներգետիկ անկախության ապահովման և էներգետիկ աղքատության կրճատման վերջնական թիրախներին հասնելուն խոչընդոտում են մի շարք չլուծված խնդիրներ.

- ԿԷԿԳԾ -ի բացակայություն
- Ոռոգման և խմելու ջրի անհասանելիություն
- Արոտավայրերի կրճատում
- Հողերի չեզոք դեգրադացմանն ուղղված միջոցառումների բացակայություն
- Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության խիստ կախվածություն կլիմայական պայմաններից
- Համայնքի բնակավայրերի անհամաչափ զարգացում
- Էներգախնայող բնակարանային շինարարության անբավարար մակարդակ
- Սուբվենցիոն և զարգացման ծրագրերի որոշակի մասը թեև ունի կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության ուղղվածություն, սակայն դրանք չեն դիտարկվել, գնահատվել և պլանավորվել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման տեսանկյունից:
- Համայնքում էներգախնայողության և կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկացվածությունը չափազանց ցածր է:
- Համայնքում վերականգնվող էներգետիկայի ծրագրերից սպասվող սոցիալական ներդրումները կրում են կարճաժամկետ բնույթ և չեն կարող երկարաժամկետ հեռանկարում ապահովել համայնքի մշտական եկամուտ և ապահովել համայնքի հետագա զարգացումը:
- Գյուղատնտեսական նշանակության հողի կատեգորիան փոփոխելիս՝ այդ հողերը կլիմայական տեսանկյունից չեն գնահատվում, հաշվի չի առնվում հողերի բերրիության, հողում կուտակված ածխածնի կորուստը:
- Համայնքն ունի անտառտնկման պոտենցիալ:
- Համայնքի բնակավայրերը կարիք ունեն օրինակելի և կառավարելի աղբավայրերի հիմնման, ինչպես նաև նախկինում ինքնակամ առաջացած աղբակույտերի չեզոքացման:
- Կլիմայական և կանաչ էներգետիկ ուղղվածությամբ զարգացման համար համայնքը կարիք ունի միջազգային դոնոր կազմակերպությունների և «կանաչ» հիմնադրամների ֆինանսական աջակցության:
- Ազդակիր համայնքը զրկված է իր համար կարևոր սոցիալական հարցերն ընդերքօգտագործման պայմանագրերում ամրագրելու հնարավորությունից:
- Արևային կայանների կառուցման ծրագրերում չեն նախատեսվել հստակ տարածքներ այդ կայանների շահագործման արդյունքում գոյացող էլեկտրոնային թափոնների տեղադրման համար: ՀՀ-ում դրանց օգտահանման, չեզոքացման, պահման և վնասազերծման համապատասխան նորմատիվ բազան դեռևս բացակայում է:

Համայնքի կայուն զարգացման հնարավորություններ.

- «Այգ-1» (շուրջ 1 միլիարդ դրամ) և մյուս արևային կայանների ծրագրերից ստացվող ֆինանսական միջոցներ
- Համայնքի տարածքում գործող ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման պայմանագրերով նախատեսված սոցիալական ներդրումներ
- Էներգետիկ աղքատության նվազեցման նպատակով համայնքային նշանակության սեփական արևային կայանի կառուցման նախաձեռնություն, ինքնավար արևային կայանների, ջրատաքացուցիչների ներդրման խթանում
- Համայնքում արևային էներգետիկայի զարգացման պոտենցիալի օգտագործում ժամանակակից արևային տեխնոլոգիաների մշակման և ներդրման կենտրոնի ստեղծման համար
- Կլիմայակայուն գյուղատնտեսության զարգացում և դրա հիման վրա գյուղմթերքի վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնում
- Զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմանների առկայություն՝ պատմամշակութային հարուստ ժառանգություն, էկոլոգիապես մաքուր գյուղմթերքի արտադրություն

12. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԱԼԻՆԻ ՏԻՄ-ԻՆ²¹

1. Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման տրամաբանության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում համայնքի տարածքում գործող վերականգնող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող կայաններ շահագործող ընկերությունների հետ կնքել համագործակցության պայմանագրեր համայնքային էներգախնայողությանն ու կլիմայի հարմարվողականությանն ուղղված ծրագրերի իրականացման համար ընկերությունների կողմից մասհանումների վերաբերյալ:
2. Համայնքային բյուջեի ծախսային մասում ներառել «տարվա բնապահպանական, կլիմայական, էներգետիկ ծրագրերի, աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ծախսեր» բաղադրիչը:
3. Էներգետիկ աղքատության կրճատման, կլիմայի փոփոխության դիմակայմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացմանն օժանդակելու նպատակով համայնքային կառույցում ստեղծել խորհրդատվական բնույթ կրող միավորներ, էներգետիկ կառավարչի հաստիք: Աշխատակազմում ձևավորել ֆոնդ՝ միջազգային ծրագրերին մասնակցության համար տարվող աշխատանքները մասնագիտական կառույցներին պատվիրակելու համար:
4. Համայնքի էներգետիկ աղքատության նվազեցման նպատակով նախաձեռնել համայնքային արևային կայանի կառուցում:
5. Համայնքի զարգացման հնգամյա և սուբվենցիոն ծրագրերը մշակելիս հաշվի առնել կլիմայի փոփոխության մեղմման, հարմարվողականության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության տեղայնացման կարևորությունը և բնակչության իրական կարիքները, ՄԱԿ-ի կայուն զարգացման կոնցեպտը, համայնքում սոցիալական արդարության ու

²¹ Փաստաթղթով առաջարկվող օրենսդրական փոփոխությունների և լրացումների առաջարկները ներկայացվելու են ՀՀ կառավարություն քննարկման համար:

- Էներգամատչելիության ապահովումը, այդ միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացում ապահովել հանրության բավարար մասնակցության բաղադրիչները:
6. Արևային էներգետիկայի բիզնեսի կողմից հաստատված բնապահպանական և սոցիալական ազդեցությունը մեղմող հիմնական միջոցառումների պլանների կատարումը մշտադիտարկելու համար ստեղծել աշխատանքային խումբ համայնքապետարանին կից հանրության մասնակցությամբ:
7. Համայնքում արևային էներգետիկայի տեխնոլոգիական կենտրոն հիմնելու ուղղությամբ տանել աշխատանքներ պետական կառույցների հետ:
8. Համայնքի հնգամյա զարգացման և սուբվենցիոն ծրագրերը ենթարկել վերագնահատման՝ դրանց կլիմայական, էներգետիկ և աղետների ռիսկերի գնահատման տեսանկյունից:
9. Հնգամյա զարգացման ծրագրում և տարեկան աշխատանքային պլաններում ներառել համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերում խմոցների ստեղծման և արոտավայրերի ու դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման, ինչպես նաև ջրահեռացման աշխատանքներ:
10. Մշակել արոտավայրերի օգտագործման և պահպանման միջոցառումների պլան՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների՝ «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման վերաբերյալ» մեթոդական ուղեցույցի:
11. Էներգախնայողության և կլիմայական քաղաքականությունների վերաբերյալ կազմակերպել և իրականացնել իրազեկման միջոցառումներ համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, բնակչության համար:
12. Համայնքային պահուստային հողերի հենքի վրա կազմակերպել էկոգյուղատնտեսական կոոպերատիվներ:
13. ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին միանալու գործընթացում բարձրացնել համայնքի բնակչության իրազեկածությունը Դաշնագրի նպատակների մասին և ապահովել լիիրավ մասնակցությունը համայնքի Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման գործողությունների ծրագրի, ինչպես նաև համայնքի կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունների և միջոցառումների մշակմանը և իրականացմանը:
14. Համայնքի բնակչության սոցիալական վիճակի բարելավման, եկամուտների բարելավման համար համայնքի տարածքում հատկացնել գյուղմթերքի վաճառքի կիրակնօրյա շուկաների կազմակերպման տարածքներ գյուղամթերքների իրացման խրախուսման նպատակով, ապահովել շուկաների գովազդը, այս հարցում ֆինանսական աջակցություն ստանալու համար դիմել միջազգային դոնոր կազմակերպություններին:
15. Բարձրացնել կանանց ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում, կլիմայական և էներգետիկ ծրագրերում:
16. Հաշվի առնելով էլեկտրոնային թափոնների կառավարման նորմերի բացակայությունը՝ ՏԻՄ-ի և արևային էլեկտրակայան շահագործող ընկերությունների միջև կնքել պայմանագիր էլեկտրոնային թափոնների կառավարման ճանապարհային քարտեզի մշակման վերաբերյալ:

Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ

<p>Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված միջոցառումների օրինակներ</p> <p><i>Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներն ուղղված են կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմմանը և դրանց նկատմամբ հասարակության դիմակայունության բարձրացմանը:</i></p>	<p>Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ</p> <p><i>Կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներն ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը:</i></p>
<ol style="list-style-type: none"> 1. Բնական աղետների ռիսկերի կառավարման պլանների մշակում ու իրականացում 2. Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետության բարելավում, կառավարման ենթակառուցվածքների զարգացում 3. Համայնքային անտառների, խոնավ տարածքների և գետերի ափամերձ տարածքների պաշտպանություն 4. Կայուն օրգանական գյուղատնտեսության զարգացում՝ մշակաբույսերի սորտերի փոփոխություն, ռոտզման ժամանակակից մեթոդների կիրառում, ջրամբարաշինություն 5. Կայուն քաղաքաշինություն՝ կանաչ տարածքների ավելացում 6. Առողջապահական համակարգերի կարողությունների զարգացում՝ կլիմայի փոփոխության հետ կապված հիվանդությունների կանխարգելման և կառավարման միջոցառումների մշակում, իրականացում 7. Էներգախնայողության նոր տեխնոլոգիաների զարգացում, վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում 8. Միջազգային համագործակցության ընդլայնում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների մշակման և իրականացման, փորձի փոխանակման և տեխնոլոգիաների փոխանցմանն ուղղված գործողությունների իրականացում 9. Համայնքի իրազեկման բարձրացում կլիմայի փոփոխության և դրա ազդեցության վերաբերյալ, տեղեկատվության տարածում 	<ol style="list-style-type: none"> 1. Հանածո վառելիքի օգտագործման նվազեցում, վերականգնվող էներգիայի աղբյուրների տեսակարար կշռի ավելացում համայնքային և անհատական սեկտորում 2. Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում համայնքային շենքերում և ծառայությունների և տնային տնտեսություններում /շենքերի ջերմամեկուսացում, էներգաարդյունավետ ջեռուցման և հովացման համակարգերի օգտագործում, էներգախնայողություն/ 3. Օրգանական թափոնների կոմպոստացում, սննդային թափոնների նվազեցում, անտառահատված տարածքներում գյուղատնտեսական աշխատանքների բացառում 4. Գյուղատնտեսական թափոններից բրիկետների արտադրության կազմակերպում 5. Անասնապահության թափոններից օրգանական պարարտանյութերի արտադրություն 6. Անտառահատումների կանխում, անտառվերականգնում, անտառապատում 7. Թափոնների տեսակավորում և վերամշակում, աղբավայրերից ջերմոցային գազերի արտանետումների վերահսկում 8. Հեծանիվների և հետիոտնի համար ենթակառուցվածքների զարգացում, էլեկտրական մեքենաների և էկոլոգիապես մաքուր այլ տրանսպորտային միջոցների օգտագործում: 9. Կլիմայի փոփոխության մեղմման մասին հանրության իրազեկության բարձրացում:

<p>10. Գյուղատնտեսական արտադրությունում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցությունը մեղմող միջոցառումների իրականացում</p> <p>11. Անասնակերի որակի բարելավման և արտադրության ծավալների ավելացմանն ուղղված տեխնոլոգիաների ներդրում</p> <p>12. Համայնքում հեղեղումների և սելավների վաղ ազդարարման համակարգերի ներդրում</p>	
---	--

Հավելված 2

2024թ. հուլիսի 1-ի դրությամբ արևային էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ Թալին համայնքում արևային էլեկտրաէներգիա արտադրող կայանների հիմնական ցուցանիշները

h/h	Շահագործող կազմակերպության անվանումը	Լիցենզիայի համարը	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը,	Լիցենզիայի գործողության ժամկետը	Կայանի անվանումը	Կայանի հզորությունը, կՎտ	Էներգիայի տարեկան արտադրանքը, մլն կՎտժ	Կայանի զբաղեցրած տարածքը, հա, գտնվելու վայրը	Լրացուցիչ տեղեկատվություն
1.	«Սուլար փրոդակշն» ՍՊԸ	607	12.07.2018թ.	12.07.2038թ.,	«Թալին-1»	960,0	1,62	2,31 ք. Թալին	2019թ. արտադրել է 436,3 կՎտժ էլեկտրաէներգիա՝ 22357,3 հազ. դրամ ապրանքային արժեքով
2.	«Գ.Սուլար» ՍՊԸ	656	19.11.2020թ.	22.11.40թ.	«Գ.Սուլար»	800.0	1. 43	5,8 գ. Կարմրաշեն	արևային վահանակներ AE SOLAR 380 Վտ, միաբյուրեղ 2106 հատ
3.	«Էյչ Էյչ դի սուլար» ՍՊԸ	652	28.02.2021թ.	15.01.2041թ	«Պարտիզակ-1»	4999,0	10,46	9, գ. Պարտիզակ	

		655		15.01.2042թ.	«Պարտիզակ-2»	1200,0	2,77		
4.	«Սոլիս» ՍՊԸ	640	24.02.2022թ.	24.02.2042թ.	«Շերամ»	4000,0	7,65	6, գ. Պարտիզակ,	
5.	«Շարոսուլար» ՍՊԸ	646	29.07.2021թ.	29.07.2041թ.	«Շարոսուլար»	4995,0	9,87	7,9, Կաթնաղբյուր-Աշնակ մայրուղի	
6.	«Շարոսուլար» ՍՊԸ	661	18.08.2022թ.	18.08.2042թ.	«Շարոսուլար 1»	4 810,0	9,35	գ. Կաթնաղբյուր	
7.	«Բիլդմաստեր» ՍՊԸ	677	16.05.2022թ.	16.05.2042թ.	Թալին-2	5 000,0	10,69	11,5, ք. Թալին	Ներդրումների չափը՝ 1 700,0 մլն. դրամ, Կայանի կառուցման համար ձեռք է բերվել շուրջ 11,5 հա հողակտոր, որից շուրջ 7,5 հա էներգետիկ նշանակության հողակտորի վրա կառուցվել է կայանը, Կայանի շահագործման արդյունքում CO ₂ -ի արտանետումները կկրճատվեն տարեկան 10200 տոննայով:

8.	«Դիզափայտ» ՍՊԸ	681	02.04.2020- 02.04.2022թ. թ.	02.04.20 42թ.	«Դիզա փայտ»	5 000,0	13,36	12,25, ք. Թալին	Ներդրումների չափը՝ 1 982,4 մլն.դրամ:
9.	«Սանոեյ» ՍՊԸ	680	16.05.2022թ.	16.05.20 42թ.	«Արևի կ»	5 000,0	9,74	գ. Դաշտադեմ	
10.	«Էներջի Էս ջի Էյ» ՍՊԸ	660	25.12.2019- 25.11.2022թ. թ.	25.11.20 42թ.	«Էներջ ի Էս Ջի Էյ»	4810,0	10,99	4,81 Կաթնաղբյուր – Աշնակ մայրուղի	Ներդրումների չափը՝ 1542,0 մլն. դրամ, տրանսֆորմատորային ենթակայանի մակերեսը՝ 0,13197 հա: Ըստ ՇՄԱԳ-ի եզրակացության՝ ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 24 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 200 կՎտ ատավելագույն հզորությամբ, Ժամկետանց և վնասված ֆոտովոլտային մոդուլների թիվը կազմելու է 10764 հատ ²² :
Ընդամենը						166574, 0	87,93	Շուրջ 59,57 հա	

²² <http://env.am/storage/files/219-energy-sga-katnaxbyur.pdf>

Հավելված 3

2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն արևային էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ համայնքում կառուցվող կայանների ցուցանիշներն ըստ կարգավորվող ընկերություններ

h/h	Կայանը շահագործող կազմակերպության անվանումը	Լիցենզիայի համարը	Կառուցման ժամանակահատվածը,	Էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակահատվածը	Կայանի անվանումը	Կայանի հզորությունը, կՎտ	Էներգիայի արտադրության տարեկան արտադրանքը. կՎտժ	Կայանի զբաղեցրած տարածքը, հա, գտնվելու վայրը	Լրացուցիչ տեղեկատվություն
1.	«ԼիՄար Գրին» ՍՊԸ	658	29.08.2019-29.10.2022թթ.	29.10.2041թ.	«Սօլոտ»	1230,0	2,05	Ն. Բազմաբերդ-Պարտիզակ խճուղի, թիվ 10 հողամաս:	Ներդրումների չափը՝ 417,6 մլն. դրամ
2.	«Մասդար-Արմենիա» ՓԲԸ ²³				«Այգ-1»	200000,0		547.31 հա, ք. Թալին, գ. Դաշտադեմ	Ներդրումների չափը՝ 1 982,4 մլն. դրամ

²³ «Մասդար- Արմենիա» ՓԲԸ-ն չի դիմել ՀԾԿՀ-ին համապատասխան լիցենզիա ստանալու համար, 2024թ. հունվարի 31-ի ՍՇ/34.1-Մ2-5/397-2024 պատասխան նամակը Էկոլոգի հարցմանը

3.	«Սուրբ Էնդ» ՍՊԸ	701	19.05.2022թ.	19.03.2046թ.	«Սուրբ Էնդ»	5 000,0	9,0	ք. Թալին, գ. Դաշտադեմ	Ներդրումների չափը՝ 1 416,6 մլն. դրամ
4.	«Մանուշակ 2000» ՍՊԸ	732	18.05.2023	18.05.2045թ.	«Մանուշակ»	5 000,0	13,4	գ. Դաշտադեմ	Ներդրումների չափը՝ 2 051,0 մլն. դրամ
5.	«Էներջի Էս Ջի Էս» ՍՊԸ	763	18.01.2024	18.01.2046	«Էներջի Էս Ջի Էս»	4 000,0	6,9	Թալին համայնք	
Ընդամենը						215230	598.87 հա		

Հավելված 4

Թալին համայնքի տարածքում ոչ մետաղական հանքերի հիմնական ցուցանիշներ

h/h	Շահագործող ընկերության անվանումը	Հանքավայրի անվանումը	Շահագործման թույլտվության համարը	Շահագործման ժամկետը	Հանքավայրի զբաղեցրած մակերեսը, հա	Տարեկան արդյունահանվող պաշարը, հազ.մ ³	Համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանն օժանդակության չափն ըստ ընդերքօգտագործման պայմանագրի, հազ.դրամ
1.	«Մուդամ» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայր	ՇԱԹ 29/011	01.08.2027թ.	1,625	128,7	0,0
2.	«Փեթար» ՍՊԸ	Կաթնաղբյուրի տուֆի հանքավայր	ՇԱԹ 29/037	25.01.32թ.	3,4	335,0	0,0
3.	«Սաֆարդալ» ՍՊԸ	Եղնիկի տուֆի հանքավայր	ՇԱԹ 29/165	28.10.2066թ.	4,06	233,9	0,0

4.	«Հասակ» ՍՊԸ	Վերին Բազմաբերդի տուֆի հանքավայր	ՇԱԹ 29/164	25.10.202 7թ.	10,64	1090,91	0,0
5.	«Մուշեղ և Մարինե» ՍՊԸ	Եղնիկի տուֆի հանքավայրի 1-ին տեղամաս	ՇԱԹ 29/175	25.09.33թ. .	4,81	309,6	0,0
6.	«Ընկույզնյակ» ՍՊԸ	Վերին Բազմաբերդի տուֆի հանքավայր	ՇԱԹ 29/179	15.04.202 3թ.	8,34	608,0	0,0
7.	«Սիմ» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայր	ՇԱԹՎ 29/214	07.06.204 0թ.	3,8	130,56	0,0
8.	«Ավագ և Աշոտ» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայրի 2-րդ տեղամաս	ՇԱԹՎ 29/215	04.06.202 5թ.	9,96	372,0	0,0
9.	«Հանքադրյուր» ՍՊԸ	Շղարշիկի տուֆի հանքավայր	ՇԱԹ 29/142	02.10.203 1թ.	1,86	229,0	500,0
10.	«Արգաս» ՍՊԸ	Շղարշիկի տուֆի հանքավայր	ՇԱԹ 29/299	22.06.206 3թ.	6,71	705,0	0,0
11.	«Մեծ Մեսրոպ» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայր/ բլոկ-1-Ա	ՇԱԹՎ 29/414	29.06.203 6թ.	9,0	140,0	0,0
12.	«Թալին ԱՃԹ» ՍՊԸ	Թալինի անդեզիտադրային հանքավայր	ՇԱԹ 29/453	05.04.202 6թ.	15,0	210,0	0,0
13.	«Բազմաբերդ» ՍՊԸ	Վերին Բազմաբերդի տուֆ (2-րդ տեղ.	ՇԱԹՎ- 29/154	10.04.202 3թ.	11,21	268,2	0,0
14.	«Տիգան» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայրի	ՇԱԹ- 29/545	02.09.203 7թ.	1,6	110,07	175,0

		հյուսիս-արևելյան տեղամաս					
15.	«Միխիթար պապիի թոռնիկներ» ՍՊԸ	Ակունքի տուֆի հանքավայր	ՇԱԹ-29/553	22.02.206 7թ.	12,1	1875,0	300,0
16.	«Արինչո» ՍՊԸ	Ակունքի տուֆերի հանքավայրի հյուսիս-արևմտյան տեղամաս	ՇԱԹ-29/560	22.02.206 7թ.	4,9	271,37	600,0
17.	«Կամար 006» ՍՊԸ	Ակունքի տուֆերի հանքավայր	ՇԱԹ-29/650	25.05.207 1թ.	10,89	1051,9	180,0
18.	«Արկի» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆի հանքավայրի Պարտիզակ տեղամաս	ՇԱԹ-29/575	31.01.206 8թ.	15,5	849,335	350,0
19.	«Առաքել-Սիմոն» ՍՊԸ	Հարոյան եղբայրների տուֆի հանքավայր	ՇԱԹ-29/573	01,12,206 7թ.	6,8	372,6895	300,0
20.	«Ա-քարավան» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆերի հանքավայր	ՇԱԹ-29/620	06.07.203 6թ.	1,39	89,5	175,0
21.	«Հիսալգազ» ՍՊԸ	Կաքավաձորի տուֆերի հանքավայրի Կարմիր սարի տեղամաս	ՇԱԹ-29/626	22.09.203 6թ.	2,159	178,4	175,0
22.	«Մերուժ և Էլեն» ՍՊԸ	Եղնիկի տուֆերի հանքավայրի «Հարավային» տեղամաս	ՇԱԹ-29/653	23.06.204 1թ.	2,31	277,2	600,0

23.	«Հայկ գրուպ» ՍՊԸ	Հացաշենի տուֆերի հանքավայրի (1-A, 2-B և 3-C1 բլոկներ) բացահանք	ՇԱԹ-29/660	07.04.204 2թ.	1,862	265,7	180,0
24.	«Ավ-Սթոնե» ՍՊԸ	Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրի «Սիփան» տեղամաս	ՇԱԹ-29/674	07.04.204 2թ.	7,0	687,4	250,0
25.	«Հակվակ» ՍՊԸ	Վերին Բազմաբերդի տուֆերի հանքավայրի 2-րդ տեղամաս	ՇԱԹ-29/678	01.12.204 1թ.	3,57	420,0	970,0
Ընդամենը՝ 25					161,581		4755,0